



ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

ՀՀ գործող միակ պետական կենդանաբանական այգին՝ Երևանի կենդանաբանական այգին հիմնադրվել է 1940թ: Դա գիտահետազոտական նաև կրթական օջախ է, որտեղ վայրի կենդանիները ոչ միայն ապրում և ցուցադրվում են այլ և աշխատանքներ են փարվում դրանց բազմացման համար: Ներկայումս այգում կան մոտ 200 տեսակների պարկանող կենդանիներ: Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը 8,5 հա է, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5,2 հա: Կենդանաբանական այգում բնակվող 32 տեսակի կենդանիներ և թռչուններ գրանցված են միջազգային Կարմիր գրքում, իսկ 24 տեսակի կենդանիներ և թռչուններ՝ Հայաստանի Կարմիր գրքում, այդ կենդանիների քանակի գերակշռող մասը կազմում են կաթնասունները: Կենդանաբանական այգում ցուցադրված են Հայաստանի ֆաունային բնորոշ այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են հայկական մոֆլոնը, բեզուարյան այծը, վայրի խոզը, լեռնային կաքավները, բազմաթիվ սողուններ և ձկներ:

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Հիմնադրվել է 1935 թվականին: Գործունեության հիմնական նպատակն է երկրագնդի փարբեր բուսաաշխարհագրական տարածաշրջաններից բարձր գեղազարդ և փնտեսապես արժեքավոր բուսատեսակների ներմուծումը, ցուցադրական գիտական հավաքածուների ստեղծումը, էկոլոգիական նոր պայմաններին դրանց հարմարողականության բացահայտումը, առավել հարմարված տեսակները առաջարկվում են հանրապետության քաղաքների և այլ բնակավայրերի կանաչապարման համար:

Բուսաբանական այգում ներկայացված են հազվագյուտ և անհետացող մոտ 70 տեսակ բուսատեսակներ, որոնցից 38 ներառվել են 2010թ. հրատարակված Հայաստանի բույսերի «Կարմիր գրքում»: Երևանի Բուսաբանական այգին ունի նաև արժեքավոր գիտական բաժանմունքները Սևանի և Վանաձորի տարածաշրջաններում: Հանրապետությունում կան նաև ինքնուրույն դենդրարիումներ. օրինակ՝ Սյրեփանավանի «Սոճուր», Վանաձորի «Վանաձոր», Իջևանի «Մերձարևադարձային», Բերդի «Սորաներ», Ափսղալայի, Բագրատաշենի, Բյուրականի աստղադիտարանի և «Ջերմուկ» առողջարանի դենդրոպարկերը: